ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼՈՒՐՋ Է.

ԱՆՀԱՊԱՂ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ՊԵՏՔ

Ազգամիջյան հարաբերությունների սրման պատճառով երկաթուղային տրանսպորտի տևական դարձող խափանումները զգալիորեն անդրադառնում են հանրապետության տնտեսական մեխանիզմի գործունեության վրա։ Տեղ չեն հասնում ժողովրդատնտեսական նշանակության հազարավոր տոննա բեռներ, աղետյալ գոտու վերականգնման համար ուղարկվող ցիմանյութերն ու մեխանիզմները։ **Արմենպրեսի** թղթակիցը դիմեց հանրապետության մի շարք շրջանների ղեկավար աշխատողներին, խնդրելով ներկայացնել իրենց ռեգիոնի քաղաքական և տնտեսական իրավիճակը, ի՞նչ է արվում առաջացած դժվարությունները հաղթահարելու ուղղությամբ և, իրոք, հնարավո՞ր է սեփական ուժերով դուրս գալ փակուղուց։

ՌՈԲԵՐՏ ՄԵՀՐԱԲՅԱՆ (ՀԿԿ Մեղրու շրջկոմի առաջին քարտուղար).— Մեր շրջանի համար, իրոք, ստեղծվել է ծանր կացություն։ Արդեն մի քանի օր է, ինչ չեն երթևեկում գնացքները, վառելանյութի բացակայության պատճառով նաև ավտոբուսները։ Հանրապետության մյուս ռեգիոնների հետ կապը պահպանված է միայն երկու ուղղաթիռների միջոցով, այն էլ չգիտենք, թե ի՞նչ տեղափոխենք՝ ուղևորնե՞ր, թե՞ ապրանքներ։ Եվ դա՝ գյուղատնտեսական աշխատանքների ամենաեռուն շրջանում։ Հասունացած պտուղը իրացնել է պետք, բայց ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով... Լիովին կանգ է առել շինարարությունը։ Առանց շինարարական նյութերի ու կառուցվածքների ի՞նչ կարող ենք կառուցել։ Իսկ շինարարությունը այսօրվա վիճակով մեր շրջանի համար հարցերի հարցն է։ Չէ՞ որ ազգամիջյան լարված հարաբերությունների հետևանքով Մեղրիում նույնպես հավաքվել են մեծ թվով գաղթականներ՝ 1500 մարդ։ Նրանց բնակարանով, աշխատանքով ապահովել է պետք, առօրյա կարիքները հոգալ է պետք։ Բայց ինչպե՞ս. խանութները գրեթե դատարկվել են, իսկ շրջափակումը շարունակվում է։ Մենք ողջունում են Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դիմումը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը և Ադրբեջանի Հանրապետության գերագույն իշխանությանը, որով պընդում է անհապաղ միջոցներ ձեռնարկել Ադրբեջանում բնակվող հայերի անվտանգությունն ապահովելու, երկաթուղային և ավտոճանապարհների շրջափակումը վերացնելու համար։ Մեր իրավական պետության մեջ չի կարելի թույլ տալ անօրինական այսպիսի քայլեր, բիրտ կամայականություն, որը ժողովրդի կյանքը դուրս է հանել նորմալ հունից, ստեղծել խիստ վտանգավոր իրավիճակ։

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ (ՀԿԿ Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար).— Անկայուն է դարձել նաև մեր շրջանի՝ հանրապետության լեռնահանքային արդյունաբերության կենտրոնի տնտեսական վիճակը։ Միայն օգոստոս ամսվա ընթացքում 22 օր Ղափան ոչ մի ապրանքատար գնացք չեկավ։ Հարցը կարգավորելուց հետո, ընդամենը մեկ շաբաթ անց, կրկին խափանվեց գործը։ Ահա արդեն 9 օր է, ինչ արդյունաբերական կենտրոն գնացք չի մտել։ Մոլիբդենը ամբարվում է շուրջ 250 հասցեներով։ Պատկերացրեք մեր պարտեյորների վիճակը։ Փոխադարձ հեռագրերը, որ տրվում են երկուատեք, գործին չեն օգնում։ Այս օրերին արտադրությունը ոչ մի վայրկյան չի դադարել, բայց առաքում չկա։ Երկաթուղային հաղորդակցության խափանման պատճառով լիովին կազմալուծված է նաև շինարարությունը։

Սրանք լուրջ հարցեր են, որ կարող են լուծում ստանալ միայն կենտրոնական մարմինների գործուն միջամտությամբ, որն առայժմ չի արվում։

ԱՆԺԵԼԱ ԲՈՒԴԱՂՅԱՆ (ժողովրդական դեպուտատների Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահ).— Գորիսը Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հետ կապող ամենահարմար շրջանն է։ Բնականաբար, այս օրերին, երբ լրջորեն է դրված Ստեփանակերտի հետ կապ պահպանելու հարցը, Գորիս—Լաչին ավտոմայրուղին աշխատում է գերբեռնվածությամբ։ Բայց վերջին օրերին, երբ ԼՂԻՄ-ը հայտնվեց տնտեսական շրջափակման մեջ, ճանապարհներին կանգնած են մնացել սենդամքերքով, շինանյութով, մեխանիզմներով և այլ ապրանքներով բեռնված 100 բեռնատար ավտոմեքենա։ Այն տպավորությունն է ստեղծվել, որ կարծես ոչ ոքի չի հուզում այդ հարցը։ Մենք բազմաթիվ հեռագրեր ենք հղել Մոսկվա, Բաքու, ահազանգել ենք ստեղծված իրավիճակի մասին, բայց մինչև օրս ոչ մի պատասխան չենք ստացել։ Երկու հանրապետությունների ղեկավարների Մոսկովյան հանդիպումից հետո, երբ կենտրոնական մամուլը գրեց, որ ուղիներ են փնտրվում ազգամիջյան լարվածությունը թուլացնելու համար, մեր շրջանի ղեկավարները դիմեցին հարևան ադրբեջանական շրջանների ղեկավարներին, նրանց հրավիրեցին Գորիս տեղում իրավիճակին ծանոթանալու և հարցը լուծելու համար։ Սակայն այդ հրավերը չընդունվեց։ Ավելին, վիճակը ավելի վատթարացավ։

Քանիցս ասվել է, որ Գորիսի սահմանամերձ գոտում երևում են ինչ-որ խմբեր, որոնք անհանգստություն տեղիք են տալիս։ Բնակչությունը, մանավանդ Ադրբեջանից գաղթածները, պարզապես հուզված են։ Նրանք վստահ չեն, որ եթե վաղը զինված հարձակում լինի խաղաղ գյուղերի վրա, օգնությունը չի ուշանա։ Երևան—Գորիս—Լաչին—Ստեփանակերտ—Եվլախ մայրուղին, որը միութենական նշանակության ճանապարհ է, մի հատվածում փաստորեն պաշարված է, բայց դա ոչ ոքի չի հուզում։ Մինչև ե՞րբ։ Մի՞թե կարելի է իրավական պետության մեջ այդքան անտարբեր լինել մի ժողովրդի իրավունքների նկատմամբ։ Հենց անպատժելիության զգացումն է այդքան լրկտի դարձրել «բլոկադայի» և «չհայտարարված պատերազմի» հեղինակներին։ Դրան պետք է վերջ տրվի։

Անհապաղ պետք են գործնական միջոցներ։

ՅՈՒՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ (կուսակցության Սիսիանի շրջկոմի քարտուղար).— Պարզ ասեմ, մեր շրջանի բնակչությունը խիստ անհանգիստ վիճակում է, և դրա համար ռեալ հիմքեր կան։ Հայտնի է, որ այս տարի շրջանի արոտավայրերից բռնի ուժով Ադրբեջանի սահմաններն էր քշվել-տարվել 600 գլուխ ոչխար և 100 գլուխ խոշոր եղջերավոր անասուն։ Հիմա ներքին գործերի ստորաբաժանումների և մեր ժողովրդական դրուժինայի անդամների շուրջօրյա հերթապահության շնորհիվ հարձակման վտանգը նվազագույնի է հասցվել։ Բայց դա նորմալ համարել չի կարելի։ Մենք մարդկանց կտրել ենք հիմնական աշխատանքից, առաջնային հոգսերից։

Շրջանը իր հարկի տակ տեղ է տվել Ադրբեջանից ներգաղթած, ինչպես և աղետի գոտուց եկած ոչ քիչ թվով ընտանիքների, որոնց անհրաժեշտ է ապահովել բնակարանով, աշխատանքով։ Այսօրվա վիճակով շուրջ 2700 մարդ մեզ մոտ անօթևան է։

Ինչպե՞ս օգնել նրանց։ Ահա այս հարցը այսօր հուզում է մեզ, ինչպես նաև շրջանի յուրաքանչյուր բնակչի։ Իսկ այսպես ասած տընտեսական շրջափակումը շարունակվում է՝ իր ծանր հետևանքներով։

ՎԱՐԴԱՆ ՓԱՇԻԿՅԱՆ (ՀԿԿ Նոյեմբերյանի շրջկոմի առաջին քարտուղար).— Մենք Ադրբեջանի հետ շուրջ 70 կիլոմետր ընդհանուր սահման ունենք։ Հարևանության այդ սահմանը այժմ մեզ համար դարձել է անհանգստության, լարվածության գոտի։ Հիմա էլ՝ թողած կարևոր շատ գործեր, սահմանամերձ գոտում հերթապահություն ենք անում, որովհետև ժողովուրդը երկյուղում է անակնկալ հարձակումներից։ Որքա՞ն պետք է շարունակվի այս ամոթալի վիճակը։ Մարդկանց անձի անվտանգության երաշխիքներ են պետք, խաղաղ, ստեղծագործ աշխատանքի երաշխիքներ։ Իսկ այս շիլան մեր հարևանները եփում են այն պահին, երբ Հայաստանի ժողովուրդը տարել է ողբերգություններից ամենամեծը՝ երկրաշարժի ահեղ ավերումները։ Տնտեսական շրջափակումը խայտառակություն է, խաղաղ ժողովրդի դեմ ուղղված ոտնձգություն։ Առանց այդ էլ հոգսեր շատ ունենք՝ կապված 7500 այն նորաբնակների տեղավորման հետ, որոնք մեր շրջան են եկել հարկադրաբար, մի մասը երկրաշարժից բնավեր, մյուս մասը՝ իր հարազատ օջախներից հալածված։ Իսկ բնությունն էլ առավել անբարեհաճ գտնվեց մեր նկատմամբ։ Երկրաշարժից հետո երաշտ, կարկուտ։ Եվ փոխանակ ուժերը կենտրոնացնենք բերքը փրկելու, ձմռանը նախապատրաստվելու համար, ընկել ենք «բլոկադայի» մեջ։ Տեղ չեն հասնում երկրի տարբեր կենտրոններից առաքվող ժողովրդատնտեսական բեռները, օգնության գնացքները։ Նոյեմբերյանցին, որ միշտ իր աճեցրած անուշահամ պտուղների քաղցրությամբ է խոսել աշխարհի հետ, այսօր դառնությամբ է լցված. ո՞վ պետք է փակի նման նկրտումների ճանապարհը։